ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ռուսաստանում հայ բնակչության շեշտակի աճը, ինչպես և հայ եկեղեցու պետերի ու ռուսական արքունիքի միջև XVIII դարի սկզբներին հաստատված կապերը հանգեցրին ռուսահայոց թեմ ստեղծելու և թեմական առաջնորդ նշանակելու անհրաժեշտությանը։

1717 թ. էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցին Ստեփանոս արքեպիսկոպոս Գաղաթացուն նշանակեց ռուսահայոց նորաստեղծ թեմի առաջնորդ՝ Աստրախան նստավայրով։ Այդ նույն ժամանակ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, որը գործուն մասնակցություն էր ունեցել պարսիկ և թուրք նվաճողների դեմ մղված ազգային-ազատագրական պայքարին և անմիջական քաղաքական հարաբերություններ հաստատել Պետրոս I-ի արքունիքի հետ, նույնպես անհրաժեշտ էր համարել ռուսահայերը համար ունենալ թեմական առաջնորդ, որը հոգալու էր Աղվանից կոչվող աթոռի իրավասության տակ ընկնող շրջաններից Ռուսաստան գաղթած հայերի հոգևոր կարիքները։ 1716 թ. Իսրայել Օրու զինակից Մինաս վարդապետի Ղարաբաղ ժամանելուց (Պետրոս I-ի հանձնարարությամբ) օգտվելով, Եսայի կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրեց և, շնորհելով արքեպիսկոպոսի աստիճան, ուղարկեց Ռուսաստան որպես թեմական առաջնորդ[1]։

Այսպիսով, թեև հետագա հարյուր տարիների ընթացքում ռուսահայերն ունեին միայն մեկ թեմ, բայց հիմնադրման հենց սկզբից նրա ղեկավարման գործում ի հայտ եկավ էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների հակամարտությունը։ Եվ չնայած վերջինս դավանաբանական հարցերում ճանաչում էր էջմիածնի գերիշխանությունը, այդուհանդերձ, վարչական տեսակետից ինքնուրույն էր կառավարում Արևելյան Անդրկովկասի հայերին և այժմ նպատակադրվել էր իրեն ենթարկել նաև քաղաքական տեսակետից կարևոր և հարուստ ռուսահայ թեմը։

Մինաս արքեպիսկոպոսը մինչև իր մահը (1740 թ.) ապրում էր Մոսկվայում կամ Պետերբուրգում և փաստորեն չէր կատարում թեմական առաջնորդի պարտականությունները, թեև Ռուսաստանում հայ եկեղեցու գրության վերաբերյալ առանձին հարցերով երբեմն զիմում էր ռուսական կառավարությանը։ Նամակներից մեկում նա բողոքում և խոստովանում էր, որ Ռուսաստանի (այդ թվում և Աստրախանի) հայերն իրեն չեն ճանաչում որպես իրենց հոգևոր հովվի[2]։ Միաժամանակ, մի այլ աղբյուրից հայտնի է, որ 1717 թ.

---

[1] Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб. 1898, էջ 323։

[2] Նույն տեղում, էջ 461։

մինչև XVIII դարի կեսերը Ռուսաստանի ամենամարդաշատ հայ գաղութում՝ Աստրախանում փոխվել են յոթ եպիսկոպոսներ՝ Ստեփանոս Գաղաթացին, Սարգիս Կեսարացին, Ներսեսը, Մաղաքիան, Կարապետը, Գրիգորը և, վերջապես, Բարսեղ Փարաղեցին, որ նշանակվել էր 1745 թ.[3]։ Ըստ Երևույթին, նրանք բոլորն էլ նշանակված են եղել Էջմիածնի կաթողիկոսի կողմից։ Այսպես շարունակվում է մինչև 1749 թ., երբ Սիմեոն կաթողիկոս Երևանցու հաղորդած տվյալների համաձայն «...ի ժամանակս Ղազար կաթողիկոսին ճահկեցւոյ, ի ՌՃՂԸ թուոջն մերում ապստամբեցան (Աստրախանի հայերը—Վ. Խ.) (Աթոռոյս, և եղին իւրեանց յատուկ Առաջնորդ հրամանաւ թագաւորին Ռուսաց զՍտեփաննոս Եպիսկոպոս ոմն ի վիճակէն Գանձասարու վասն դժնեայ բարոյութեան Բարսեղ Եպիսկոպոսին Փառակեցւոյ, որ յայնմ միջոցի առաջնորդ էր տեղւոյն ի Ղազար կաթողիկոսէն կարգեցեալ»[4]։ Այս համառոտ հաղորդման մեջ թաքնված են իրադարձություններ, որոնց պատճառներն ավելի խորն են, քան այս կամ այն եպիսկոպոսի բնավորությունից եղած անբավականությունը։

Մատենադարանի արխիվային բաժնում պահպանվել է Բարսեղի դեմ Ղազար կաթողիկոսին Աստրախանի հայերի գրած գանգատի բնագիրը, որը պարունակում է նաև Բարսեղի փոխարեն Ստեփանոս վարդապետին թեմական նշանակելու խնդրանքը[5]։ Բողոքի տակ կա երեսուներեք ստորագրություն և Աստրախանի ամենաերևելի հայերի՝ Բունիաթի որդի Գալուստի, Դավիթ Խաչատրյանի, Մուրադի որդի Պողոսի, Դավիթ դի Գրիգորի, Հովհաննեսի որդի Սարգսի, Կարապետի որդի Պողոսի, Գրիգորի որդի Եղիազարի և այլոց կնիքները (ընդամենը 25 կնիք)։ Փաստաթուղթը թվագրված է 29 սեպտեմբերի 1749 թ.։

Այդ բողոքագրից պարզվում է, որ Բարսեղ վարդապետը, Աստրախանում իր հայտնվելու պահից (1748 թ.), կոպտությամբ և ամբարտավան վարքով իրենից վանել է տեղի բնակչությանն ու հոգևոր պաշտոնյաներին։ Աստրախանի հայերը հիշեցնում են, որ իրենք այդ մասին գրել են էջմիածին տակավին 1748 թ. և 1749 թ. սկզբին, սակայն իրենց խնդրանքը ոչ մի արձագանք չի գտել։ Թվարկելով Բարսեղի մի շարք հանցանքները (դրամի յուրացում և այլն), գանգատի հեղինակները խնդրում են որպես նվիրակ և ռուսահայոց հոգևոր առաջնորդ օրհնել Ստեփանոս վարդապետին, որին ռուսական կառավարությունն արդեն հաստատել էր։

Ե՛վ «Ջամբռի» վերոհիշյալ հատվածում, և՛ բուն գանգատի մեջ ուշադրավ է այն փաստի հիշատակումը, որ Ստեփանոսը ստացել է «ռուսական ցարի թույլտվությունը»։ Ինչի՞ց էր առաջացել նման վերապահումը։

Նույն այդ տարիներին, իրենց իրավունքների համար հայերի մղած համառ պայքարի շնորհիվ, 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրով Աստրախանում ստեղծվեց հայկական դատարան (ռատհաուզ), հաստատվեցին Աստ-

3 Հովսեփ ավագ քահանա Բունիաթյանց, Համառոտ տեղեկագիր Աստրախանու հայոց թեմի վերա, «Արարատ», էջմիածին, 1876, Թ, էջ 325։

4 «Ջամբռ, Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երևանցւոյ», Վաղարշապատ, 1873, էջ 39։ Մեզ հետաքրքրող իրադարձությունները շարադրված են «Ջամբռի» այն հատվածում, որը նկարագրում է հենց Սիմեոնի գործունեությունը և գրված է, ինչպես իրավացիորեն ենթադրում են հետազոտողները, այլ հեղինակի կողմից։

5 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 11։

բախանի հայերի արտոնությունները և ամրապնդվեց նրանց վարչական-իրավական դրությունը ռուսական օրենսդրական համակարգում։

Սրան հակառակ, մի քանի տարի առաջ (1742 թ. հունվար) հրապարակված հրամանագրով վերացվել էին Ռուսաստանի բոլոր հայկական եկեղեցիները (բացի Աստրախանի եկեղեցուց), որ չէր կարող դժգոհություն չառաջացնել ռուսահայերի միջավայրում։ Աստրախանում հայկական դատական վարչական օրգանի ստեղծումը, որպես նրանց իրավական ստատուսի ամրապնդման արդյունք, ըստ երևույթին նրանց հանգեցրեց իրենց եկեղեցական իրավական դրությունը ռուսական օրենսդրության հետ համաձայնեցնելու անհրաժեշտության ըմբռնմանը։ Ավագերեց Բոանն Սավինսկին իր «Աստրախանի թեմի հայերը» աշխատությունում գրում էր. «Ռատհաուզի հիմնադրումը առավել սիրտորեն պետք է համախմբեր Աստրախանի հայ համայնքը։ Շուտով նրանք հասկացան, որ իրենց եկեղեցական գործերը ևս անհամեմատ հաջող կընթանան, եթե հայերին գլխավորի մի հոգևոր ներկայացուցիչ, որը որպես այդպիսին ճանաչվի կառավարության կողմից»[6]։

Փաստաթղթերի մեջ խիստ բնորոշ կերպով արտացոլված է շրջադարձային այդ պահը։ «Հայ ժողովրդի պատմության տեսության վերաբերյալ ակտերի ժողովածուում» հրապարակված արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1749 թ. հուլիսին Արտաքին գործերի կոլեգիան որոշում է ընդունել «Հայ արքեպիսկոպոս Ստեփանոսի խնդրագրի վերաբերյալ, նրան Աստրախան մեկնելու թույլտվության և այնտեղ բնակվող բոլոր հայերի հոգևոր առաջնորդությունը ստանձնելու մասին, այնտեղ գտնվող հայ Վասիլ ավագերեցի փոխարեն»[7]։

Ստեփանոսը ռուսական կառավարությանը վաղուց հայտնի անձնավորություն էր։ Դեռևս 1733 թ. վրաց թագավոր Վախթանգի մերձավորներից մեկը խնդրագիր էր մատուցել Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային՝ ավագերեց Ստեփանին Աստրախանում բնակություն հաստատելու թույլտվություն տալու մասին[8]։

Մյուս խնդրագրից, որ 1738 թ. արտաքին գործերի կոլեգիա է մատուցել ինքը՝ «արխիմանդրիտ Ստեփան Անանյինը» (վարդապետ Ստեփանոս Անանյանը), երևում է, որ նա վաղուց էր գտնվում Վախթանգ թագավորի արքունիքում և դեռ Պետրոս I-ի պարսկական արշավանքի շրջանում, ինչպես և հետագա տարիներին, կատարում էր Վախթանգի քաղաքական հանձնարարությունները, մեկնում էր պարսիկների կողմից գրավված Հայաստանի և Վրաստանի շրջանները՝ կոչ անելով աջակցել ռուսական բանակին և նրան դաշնակցած վրաց-հայկական զորքերին, «որի համար այդ վայրերում թշնամու կողմից ատելի էր դարձել»[9]։ Ստեփանոսը մնաց Վախթանգի մոտ նաև վերջինիս Վրաստանից արտաքսվելուց հետո՝ ընդհուպ մինչև Աստրախան տեղափոխվելը։ Ստեփանոսի ծառայությունը Վախթանգ թագավորին, ինչպես

---

[6] Иоанн Сависки, Армяне астраханской епархии и отношение к ним местных архипастырей в XVIII веке, Астрахань, 1900, *էջ 26։*

[7] «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. 1, М., 1833, *էջ 374։*

[8] Архив внешней политики России (АВПР), ф. 100 (Сношения России с Арменией), оп. 1, 1733, д. 5, *թ. 1։*

[9] *Նույն տեղում, 1738,* д. 1, *թ. 12։*

նաև ռուսական շահերի օգտին նրա գործունեությունը գրավոր վկայվել է նաև Վախթանգի որդու՝ ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, արքայազն Բակարի կողմից[10]։

Այսպիսով, Ստեփանոսը Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման գործուն մասնակիցներից մեկն էր, որն իր ծառայությունների դիմաց կարող էր ակնկալել ռուսական արքունիքի հովանավորությունը։ Այդ պատճառով էլ աստրախանցիների և էջմիածնի նվիրակ Բարսեղի ընդհարման ժամանակ նա սպասողական դիրք չգրավեց, այլ անձամբ մեկնեց Պետերբուրգ և օգտագործելով իր կապերը, հաստատվեց ռուսահայերի հոգևոր հովվի պաշտոնում։

Հավանաբար, Ստեփանոսի նախաձեռնությամբ Մոսկվայի և Աստրախանի հայերի անունից խնդրագիր է ներկայացվում Արտաքին գործերի կոլեգիա։ Խնդրագրի մեջ նշվում էր, որ Ռուսաստանի հայերը հոգևոր առաջնորդ չունեն։ Բարսեղի (Վասիլիի) վերաբերյալ ասվում է, որ նա էջմիածնից ուղարկված է Ռուսաստան որպես սոսկ նվիրակ, եկեղեցաշինության համար միջոցներ ժողովելու համար և քանի որ արդեն հավաքել է բավարար քանակությամբ դրամ, ուստի պետք է վերադառնա Արարատյան վանքը (էջմիածին)։ Սակայն, մերժելով այդ մասին նրան արված առաջարկը, նա շարունակում է մնալ Աստրախանում և ծախսել իր ժողոված դրամը, որի համար հայերի հետ մշտապես վեճի է բռնվում և այլն[11]։ Այնուհետև, խնդրագրի հեղինակները մատնացույց են անում Ստեփանոսի՝ որպես հոգևոր առաջնորդի բնակության առավելությունները. վերջինս ավելի քան քսան տարի է ինչ ապրում է Ռուսաստանում ու անշահախնդիր աշխատել է հօգուտ Ռուսաստանի, ուստի լիովին արժանի է խրախուսանքի և ապրուստի միջոցներ ստանալու[12]։ Այս խնդրագրի արդյունքը, ինչպես դիտենք, եղավ այն, որ արտաքին գործերի կոլեգիան ընդառաջ գնաց Ստեփանոսին, իսկ Բարսեղին կարգադրվեց Աստրախանից մեկնել այնտեղ, որտեղից եկել էր, այսինքն՝ էջմիածին[13]։

Կաթողիկոսը չբավարարեց Աստրախանի հայերի խնդիրքը, սակայն Ստեփանոսը, որն արդեն հաստատվել էր ռուսական արտաքին գործերի կոլեգիայի կողմից, շարունակեց կատարել թեմական առաջնորդի իր պաշտոնը, ընդունելով Գանձասարի Ներսես կաթողիկոսի գերակայությունը, որի հետ նա վաղուց կապված էր և եպիսկոպոս էր ձեռնադրվել նրա կողմից[14]։

«Եւ յայնմ հետէ,— գրում է այդ դեպքերի առնչությամբ Սիմեոն Երևանցին,— ի յԱթոռոյս Եպիսկոպոս ոչ եմուտ այն երկիրն. զի հրամանաւ թագաւորին արգելեցաւ, այլ մասնաւոր վարդապետ մի գնայր նուիրակ անուամբ միայն՝ ընդ բոռամբ Առաջնորդին լինելով՝ որպէս զժողովարար մի՝ կամաւորապէս ժողովէր զնուիրակութիւնն ի բոլորէն զմասն հաղիւ առնելով գայր յԱթոռս... Վասն որոյ և Գանձասարու Ներսէս Կաթողիկոսն ժամ դտեալ (և մանաւանդ զի տեղւոյ Առաջնորդն յիւր վիճակէն էր, և յինքենէ Եպիսկոպոս

10 Նույն տեղում, թ. 15։
11 Նույն տեղում, 1767—1768, դ. 1, թ. 43։
12 Նույն տեղում, թ. 44։
13 Նույն տեղում, թ. 45։
14 «Ջամրոս», էջ 39։

ձեռնադրեցնել) և յերկիրն ևս գլխաւոր իշխանք ոմանք ի Շամախու և ի յայլ վիճակէ նորին էին, սկսաւ յոտն ածել յայն յերկիրն (Ռուսաստան)»[15].

Այսպիսով, Ստեփանոսին թեմական առաջնորդ հաստատելով, ռուսահայերը հետամտում էին իրենց եկեղեցական-իրավական դրության ամրապնդումը ռուսական օրենսդրության շրջանակներում, 1746 թ. Աստրախանի հայկական համայնքին տրված արտոնությունների և հայկական դատարանի ստեղծման փաստի մեջ տեսնելով ռուսական կառավարության բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Ռուսահայ գաղթավայրերի ղեկավարներն ըմբռնում էին, որ անհրաժեշտ է առաջին հերթին հենց այդ կառավարության հետ համաձայնեցնել իրենց եկեղեցական գործիչների թեկնածությունը։

Այսպիսով, Աստրախանի հայերը դործեցին հօդուտ այն թեկնածուի, որին սատարում էր ռուսական կառավարությունը և հօդուտ այն կաթողիկոսի (տվյալ դեպքում՝ Գանձասարի կաթողիկոս Ներսեսի), որը կողմնակից էր Ռուսաստանի հետ համաձայնեցված ակտիվ գործողություններ ծավալելուն։ Գանձասարի կաթողիկոսության ղեկավարները դեռևս XVIII դարի սկզբներից գործուն մասնակցություն էին բերում հայ ժողովրդի ազատագրական պայքարին և ռուսական պետության հետ ռազմաքաղաքական համագործակցության փորձ ունեին։

Մյուս կողմից, Ղազար Ջահկեցի կաթողիկոսն ու էջմիածնի հոգևորականությունը, թեև ըմբռնում էին ռուսական թեմի տնտեսական և քաղաքական մեծ նշանակությունը որպես ազգային ազատագրական շարժման գլխավոր հենակետի, սակայն դեռևս չէին որոշել ուղղակի քաղաքական կապեր հաստատել Ռուսաստանի կառավարող շրջանների հետ։

Մենք համաձայն ենք Ֆ. Պողոսյանի[16] հետ, որ էջմիածնի դիրքը չէր վկայում այն մասին, թե ժողովրդի ազատագրական պայքարին ուշակցելու գործում բացակայում էր Ռուսաստանի դերի ըմբռնումը, այլ որ այն թելադրված էր տակտիկական նկատառումներով, որոնք պայմանավորված էին պարսկական և թուրքական բռնակալներից էջմիածնի աթոռի կախվածության մեջ։ Սակայն էջմիածնի և Գանձասարի քաղաքական դիրքորոշման արտաքին տարբերությունն ակնհայտ էր և ժողովրդական զանգվածների (առավել ևս Անդրկովկասի սահմաններից դուրս գտնվող հայերի) մոտ ստեղծվում էր այն տպավորությունը, թե այդ տարաձայնությունների հիմքը ազատագրական պայքարի և հայ-ռուսական հարաբերությունների հարցերին տարբեր մոտեցումն էր։

Աստրախանի թեմական առաջնորդի պաշտոնում Ստեփանոսի գործունեությանն անդրադառնալիս հարկ է նշել, որ նրա վերահսկողությամբ է ընթացել նաև Աստրախանի հայոց Դատաստանագրքի՝ հայ իրավունքի նշանավոր այդ հուշարձանի ստեղծման աշխատանքը[17]։

Աստրախանի հայերի քանակական աճի, ինչպես նաև իրավական վիճակի բարելավման մասին է վկայում նոր եկեղեցիների կառուցման փաստը։ Քաղաքում խոշորագույն Պողոս Պետրոսի հայկական եկեղեցու համար ընտ-

---

15 Նույն տեղում։

16 Ֆ. Պողոսյան, Էջմիածնի կաթողիկոսությունը և հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դ. առաջին քառորդում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1977, N 4, էջ 24։

17 Նաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 7383։

տրվեց հողամաս, որը պատկանում էր Մոսկվայում ապրող, լեյբ-գվարդիայի փոխգնդապետ Դավրիթ Նազարովին[18] (ուշագրավ է, որ նա XVIII դարի 20-ական թթ. Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակից Դավիթ Նազարովի որդին էր)[19]։

Այս բոլոր իրադարձությունները՝ հայկական դաղութի աճը, 1762 և 1763 թթ. Մանիֆեստները, որոնցով խրախուսվում էր օտարերկրացիների մուտքը Ռուսաստան, հայկական եկեղեցիների շինարարությունն արգելող 1742 թ. հրամանագրի վերացումը, հայերին արտոնություններ շնորհող 1765 թ. հրամանագրի հաստատումը է՛լ ավելի ամրապնդեցին ռուսահայերի իրավական դրությունը (ինչպես վարչական, այնպես էլ եկեղեցական)։ Դա ռուսական կառավարության հովանավորող քաղաքականության արդյունքն էր, որը նպաստեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեջ ռուսահայերի քաղաքական հեղինակության բարձրացմանը։ Հայերի նկատմամբ ռուսական կառավարության հովանավորող քաղաքականության դրսևորումն էր, մասնավորապես, արքեպիսկոպոս Ստեփանոսի գործունեության խրախուսումը։ Այդ քաղաքականության արդյունքն էր նաև Աստրախանի թեմի ամրապնդումը։

Այս հանգամանքները, անշուշտ, իրենց դերն ունեցան, և հայ եկեղեցու բարձրաստիճան գործիչները, էջմիածնի կաթողիկոսի գլխավորությամբ, ավելի պարզ գիտակցեցին հայ-ռուսական հարաբերությունների զարգացման բախտորոշ նշանակությունը։ Նրանք չէին կարող չըմբռնել նաև, որ էջմիածնից Աստրախանի թեմի անջատումը կատարվել էր ոչ այնքան սուբյեկտիվ, որքան քաղաքական դրդումներով, որ այդ թեմն ունի ոչ միայն տնտեսական (էջմիածնի աթոռի եկամուտների աճի առումով), այլև քաղաքական մեծ նշանակություն։

Մատենադարանում պահպանվել են այն նամակների բնագրերը, որ հենց այդ տարիներին թեմի ինքնավարության հարցի շուրջ գրել են միմյանց Սիմեոն կաթողիկոսը և Աստրախանի հայերը։ Սիմեոնի նամակը[20] գրված է 1764 թ. հունվարի 7-ին (կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո)։ Նա տեղեկացնում է աստրախանցիներին, որ Գանձասարի Ներսես կաթողիկոսի մահվանից հետո պայքար էր սկսվել նրա աթոռի համար։ Հավակնորդներից Հովհաննեսը ճանաչել է էջմիածնի գերագահությունը Գանձասարի նկատմամբ և Սիմեոնի կողմից հաստատվել աղվանից կաթողիկոս, իսկ մյուս հավակնորդը՝ Իսրայելը, բանադրվել է։ Շարադրելով այդ բոլոր իրադարձությունները, Սիմեոնը հորդորում է աստրախանցիներին՝ խզել իրենց կապը Գանձասարից և հնթարկվել անմիջապես էջմիածնի կաթողիկոսությանը։ Միաժամանակ Սիմեոնն Աստրախան է առաքում իր նվիրակ Հովհաննես Քանաքեռցուն[21]։

Աստրախանցիների պատասխան գրությունը Սիմեոնին շարադրվել է դրանից ուղիղ երեք տարի անց՝ 1767 թ. հունվարի 3-ին, ընդ որում, ի տար-

---

18 ГАЛО, ф. 394, оп. 1, д. 2403, թ. 4—5։

19 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան, Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թթ. (նոր վավերագրեր), «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 251։

20 Մաշտոցի անվ. Մատենադարան, Լաղարյանների արխիվ, թղթ. 109, վավ. 22, թ. 1 ա։

21 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Դ, Թիֆլիս, 1894, էջ 84։

բերություն Սիմեոնի ծավալուն ուղերձի, ունի զուսպ տոն և շատ համառոտ է (ընդամենը կես էջ)։ Ինչո՞վ բացատրել պատասխանի այդքան ուշացած և զուսպ լինելը։

«Ջամբռում» տակա տվյալներից պարզվում է, որ Ստեփանոս եպիսկոպոսը և Աստրախանի մեծամեծները դանդաղել են ընդառաջել կաթողիկոսի հորդորներին, թշնամաբար են ընդունել նրա ուղարկած նվիրակ Հովհաննեսին և այլն[22]։ Ո՛չ Ստեփանոսը, ո՛չ էլ Աստրախանի դաղութի ղեկավարներից որևէ մեկը նույնիսկ չպատասխանեցին կաթողիկոսի նամակին[23]։

Ինչպես երևում է, աստրախանցի հայերը էական տարբերություն չէին տեսնում Սիմեոնի և նրա նախորդների միջև, որի պատճառով էլ ոչ մի նշանակություն չէին տալիս նրա կոչերին։ Մյուս կողմից, նոր նվիրակ Հովհաննեսը, հավանաբար, մեծ պահանջներ էր ներկայացրել Եկամուտներից Էջմիածնի բաժինը ավելացնելու հարցում, քանի որ կանգնելով իշխանության գլուխ, Սիմեոնը հատուկ ուշադրություն էր դարձնում այն բանին, որ նվիրակների գանձումները դառնային կաթողիկոսության եկամուտների հիմնական մասը[24]։

Մի քանի տարի անց, սակայն, դրությունը արմատապես փոխվում է։ 1766 թ. Սիմեոն կաթողիկոսը Պետերբուրգ է առաքում Դավիթ վարդապետին՝ Եկատերինա II կայսրուհուն ուղղված ընդարձակ մի նամակով, որտեղ մանրամասնորեն նկարագրված է Էջմիածնի դրությունն ու դերը որպես հայ եկեղեցու միասնական ղեկավար կենտրոնի, որին ենթարկվում են տարբեր երկրներում բնակություն հաստատած բոլոր հայկական համայնքները։ Նա բացատրում է, որ Ռուսաստանում բնակվող հայերն այդ տեսակետից ափոսանքի արժանի բացառություն են կազմում և խնդրում է կայսրուհու կարգադրությունն այն մասին, որ ոչ մի հայ հոգևորական իրավունք չունենա Ռուսաստան այցելել կամ այնտեղ պաշտոն գրավել առանց Էջմիածնի կաթողիկոսի համաձայնության[25]։

Սիմեոնն այդ միջոցին էր դիմել ոչ այնքան Աստրախանի թեմն Էջմիածնին ենթարկելու նպատակով (մի բան, որ ինքնըստինքյան ուներ ոչ պակաս կարևոր նշանակություն, մանավանդ, եթե հաշվի առնենք այդ թեմի հասույթների մեծությունը), որքան ելնելով հայ ժողովրդի ընդհանուր քաղաքական շահերից։ Սիմեոն կաթողիկոսը, ինչպես գրում էր Լեոն, «ոչինչ վատանգ և անհարմարություն չտեսավ, որ հայոց ընդհանրական կաթողիկոսը խնդրե քրիստոնյա պետության ուշադրությունը... Ինչպես երևում է, Դավիթ վարդապետը ուրիշ հանձնարարություններ և խնդիրքներ էլ էր տարել, որոնք վերաբերվում էին հայերի դրության»[26]։

Սիմեոնը գաղտնի էր պահում առաքելության այն խնդիրները, որոնք անմիջականորեն չէին վերաբերում ռուսահայերի եկեղեցական-իրավական դրությանը[27]։ Այնուհանդերձ, ռուսահայերի, մասնավորապես Աստրախանի

22 «Ջամբռ», էջ 39։

23 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, էջ ՃԻԵ։

24 Նույն տեղում, էջ ՂԶ։ Տե՛ս նաև Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 2։

25 «Ջամբռ», էջ 39։

26 Լ ե ո. Կաթողիկոս Հովսեփ Արղության, Թիֆլիս, 1902, էջ 34—35։

27 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, էջ 99։

հայերի մեջ կասկած ծագեց այդ առաքելության լայն նպատակների վերաբերյալ։ Աստրախանցի երևելի վաճառականներից մեկը՝ Մովսես Սարաֆովը փորձեց միջամուխ լինել Դավթի ուղևորության իսկական նպատակներին, որն առաջացրեց կաթողիկոսի դժգոհությունը[28]։

Փաստաթղթերը վկայում են, որ Աստրախանի հայերի մեջ կար կաթողիկոսի գործուն կողմնակիցների մի խմբակ, որոնց թվին էր պատկանում վերոհիշյալ Սարաֆովը։ Սերտորեն կապված լինելով ռուսական տնտեսության և Ռուսաստանի կառավարող շրջանների հետ, այդ գործիչները անհրաժեշտ էին համարում վերականգնել էջմիածնի կաթողիկոսության գերակայությունը Աստրախանի թեմի նկատմամբ և իրենց կողմից ըստ ամենայնի նպաստում էին հայ եկեղեցու (որպես հայկական համազգային միակ հաստատության) և ռուսական կառավարության (որպես հայ ազգային-ազատագրական շարժման միակ հուսալի դաշնակցի) միջև եղած կապի ամրապնդմանը։ Սարաֆովը, որ կապեր ուներ Պետերբուրգում, ինքն էր առաջարկել կաթողիկոսին իր ծառայություններն այդ հարցում, և կաթողիկոսը Մովսես Սարաֆովին խնդրել էր հարկ եղած դեպքում օժանդակել Պետերբուրգ ուղարկվող Դավիթ վարդապետին[29]։

Ռուսահայերը, կռահելով Դավթի առաքելության բուն նպատակները, նրան հանդիսավորապես ընդունեցին։ Այն լուրը, որ նա բերում է կաթողիկոսի կոնդակը և ընծաները ռուսական կայսրուհուն, շատ մեծ տպավորություն թողեց, և Դավիթ վարդապետին պատվով ընդունեցին ոչ միայն հայերը, այլև ռուս պաշտոնական անձինք[30]։

Դավիթ վարդապետի առաքելության քաղաքական կողմերի բացահայտումը և այն բերկրալի ընդունելությունը, որ ցույց տրվեց նրան հայկական գաղթավայրերում, խոսում են այն մասին, որ ռուսահայերը (մասնավորապես աստրախանցիք) ըմբռնում էին Սիմեոնի քաղաքականության նոր կողմերը, որոնք վկայում էին էջմիածնի կաթողիկոսի կողմից հայ ժողովրդի ազատագրության գործում Ռուսաստանի կարևոր դերի բացահայտ ճանաչումը։

Այդ կապակցությամբ, հավանաբար, Աստրախանի հայերի շրջանում հաղթանակել էր Աստրախանի թեմի նկատմամբ էջմիածնի կաթողիկոսի գերակայությունը ճանաչելու տեսակետը, որի արդյունքն էր Սիմեոն կաթողիկոսին հասցեագրված 1767 թ. հունվարի 3-ի վերոհիշյալ պատասխան գրությունը, որով Աստրախանի հայ համայնքի և հոգևորականության կողմից հավանություն էր տրվում թեմը հայոց ծայրագույն պատրիարք Սիմեոնին, այսինքն՝ էջմիածնի մայր աթոռին ենթարկելու առաջարկին, քանի որ հնագույն ժամանակներից ի վեր այն եղել է հայոց միակ համազգային կրոնական կենտրոնը[31]։ Այս գրության տակ առաջին ստորագրությունը դրել է ինքը՝ Ստեփանոս արքեպիսկոպոսը։ Այնուհետև հետևում են 52 անձանց ստորագրություններ՝ Պյոտր Վարդանով, Ղևոնդ Բունիաթով, Սերգեյ Իվանով, Իգնատի Անոսով, Բարթուղիմ Ոսկանով և ուրիշներ, որոնցից 12-ը քահանաներ են։

Էջմիածնին ենթարկվելու իրենց որոշումը նամակի հեղինակները կապում են Գանձասարի կաթողիկոսության մեջ եղած փոփոխությունների հետ։

28 Նույն տեղում, գիրք Ը. Թիֆլիս, 1908, էջ 44։
29 Նույն տեղում, գիրք Գ. էջ ՃԻԶ—ՃԻԿ։
30 Նույն տեղում, էջ ՃԻԸ։
31 Մաշտոցի անվ. Մատենադարան, Հաղարյանների արխիվ, թղթ. 109, գործ 22, վավ. 1։

Սակայն, ամենայն հավանականությամբ, այդ սոսկ պատրվակ էր, որ անհրաժեշտ էր իրենց հեղինակությունը պահպանելու համար։ Կարծում ենք, որ պատասխանը ստորագրելուն նախորդել էր ուժեղ պայքար համայնքի ներսում, դրանով պետք է բացատրել նաև պատասխանի համառոտությունն ու զուսպ տոնը։ Բայց, այնուամենայնիվ, այդ արդեն շրջադարձային քայլ էր, որով վերջ էր տրվում էջմիածնի հետ Աստրախանի թեմի ունեցած կազմակերպական և քաղաքական տարաձայնություններին։

1767 թ. մայիսին Ստեփանոսը ստիպված էր գանգատվել արդեն իրեն՝ կաթողիկոսին, որ Նվիրակ Հովհաննեսը, Բարթուղիմեոս Տեր-Ոսկանյան Փարաղեցին և Մովսես դի Բունիաթ Աստապատեցին (նույն ինքը՝ Մովսես Սարաֆովը—Վ. Խ.) շարունակում են կրքեր գրգռել՝ աղմուկ բարձրացնելով «անհնազան գործերի» շուրջ։ Ստեփանոսը կաթողիկոսին խնդրում էր ուղարկել մի այլ Նվիրակ, որը ավելի հանդուրժող բնավորություն ունենար[32]։

Աստրախանում տարաձայնությունների վերսկսումը անհանգստացրեց Սիմեոնին, և նա դեռևս 1767 թ. ապրիլի 9-ի նամակով հանձնարարեց. «Վասն գործոյն թէ մինչեւ այժմ խաղացուցանել զձեզ չկարացաք, եթէ այժմ ևս յետ ղալոյ Դաւիթ վարդապետին յաջողեսցի գործ քոյ բարի է և թէ ոչ, այլ ինչ մնաց մեզ գրելով ի տեղդ, ել և եկ...»[33]։

1767 թ. ամռանը Դավիթը հասավ Աստրախան և սկսեց զբաղվել Նվիրակ Հովհաննեսի և Աստրախանի թեմի ղեկավարության փոխադարձ գանգատների քննությամբ։ Սեպտեմբերի 25-ին Ստեփանոս արքեպիսկոպոսը կաթողիկոս Սիմեոնին ուղարկեց այն բացատրությունների տեքստը, որ նա տվել էր Դավիթ վարդապետին՝ ի պատասխան Նվիրակի գանգատի[34]։

Սեպտեմբերի վերջին Սիմեոնին ուղղած իր հաշվետվության մեջ Դավիթը տեղեկություններ է հաղորդում իր առաքելության հաջողության մասին ինչպես ցարական արքունիքի հետ ունեցած բանակցությունների, այնպես էլ աստրախանցիներին խաղաղեցնելու գործում. «Ի հասանիլն ի Հաշտարխան, ըստ պատուիրանի սրբազան վեհին,— գրում է նա,— արարեալ իմ զհաշտութիւն ի մէջ ժողովրդեանն և Նուիրակին»[35]։

Ստեփանոս եպիսկոպոսը նույնպես մանրամասն հաշվետու է լինում Սիմեոնին, հայտնելով, որ Հովհաննես Նվիրակի նկատմամբ իր և աստրախանցի հայ համայնքի այլ անվանի անձանց միջև ծագած վեճերը բնավ չեն խանգարել էջմիածնի նկատմամբ իրենց հավատարմությանը, այլ արդյունք են Նվիրակի դյուրաբորբոք բնավորության և սխալ գործելակերպի։

Ստանալով այդ տեղեկությունները, կաթողիկոսը հոկտեմբերի վերջին շնորհակալական կոնդակ է ուղարկում Աստրախանի հայ բնակչությանը[36]։

Մեկ տարի անց, 1768 թ. հունիսի 30-ին հրապարակվեց Եկատերինա II-ի հայտնի հրովարտակը, որտեղ նա, Պետրոս I-ի և Եկատերինա I-ի օրինակով, ինչպես ներկա «ազնվափայլ Սիմեոնին», այնպես էլ նրա պատրիարքական աթոռի հաջորդներին, այնուհետև բոլոր յուղբաշիներին և կառավա-

32 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 14։
33 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, էջ 683։
34 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 2։
35 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ը, էջ 22—23։
36 Նույն տեղում, էջ 23—24։

րիչներին ու ողջ հայ ժողովրդին կայսերական բարեհաճություն ու ողորմածություն հայտնելով, թույլատրում էր հայոց կաթողիկոսին՝ իրենց կրոնական օրենքով տնօրինել ռուսական կայսրության մեջ ապրող հայ ժողովրդի հոգևոր գործերն ու եկեղեցական ծիսակատարությունները[37]։

Ինչպես տեսնում ենք, հրովարտակով բավարարվում էին ինչպես ռուսահայերի, այնպես էլ Սիմեոնի պահանջները։ Դավիթ վարդապետի առաքելության առանձնահատուկ հաջողությունը պետք է բացատրել նաև նրանով, որ հենց նույն այս ժամանակ նախապատրաստվում էր ռուս-թուրքական պատերազմ, ուստի ցանկալի էր համարվում Ռուսաստանում բնակվող հայերի ազատագրական տրամադրությունների ակտիվացումը։

Այդ ժամանակ Ստեփանոս արքեպիսկոպոսն այլևս կենդանի չէր (նա մահացել էր 1768 թ.), ուստի Նրա փոխարեն նույն թվականին Աստրախան ժամանեց Սիմեոնի կողմից նշանակված Մինաս արքեպիսկոպոսը։ Հինգ տարի անց կաթողիկոսն այդ պաշտոնը հանձնեց երիտասարդ Հովսեփ Արղությանը-Երկայնաբազուկ արքեպիսկոպոսին, որի անձը առավել հարմար էր հայ-ռուսական քաղաքական կապերի շարունակվող ամրապնդման համար։ Ապագան հաստատեց, թե որքան հաջող էր այդ ընտրությունը։

Ուշագրավ է նշել, որ Արղությանը ռուսահայ թեմական կենտրոն Աստրախանում համեմատաբար քիչ էր լինում։ Հիմնականում նա մնում էր Պետերբուրգում, Մոսկվայում կամ հայկական նորակառույց Նոր Նախիջևան և Ղրիգորիոպոլ քաղաքներում, քանի որ այդ տարիներին հենց այդ կենտրոններում էին վճռվում ռուսահայերի առջև ծառացած բախտորոշ խնդիրները։

1780 թ. սկզբին Արղությանը և Հ. Լազարևը Պետերբուրգում հանդիպում են Սուվորովի հետ։ Դրանից քիչ առաջ, 1779 թ. նոյեմբերին, հրապարակվել էր Եկատերինա II-ի հրովարտակը՝ Նոր Նախիջևանի հիմնադրման մասին, և Արղությանը մի քանի տարի իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրել էր Ղրիմից արտագաղթած հայերի վերաբնակեցման հետ կապված խնդիրների վրա։ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Հովսեփ արքեպիսկոպոսն ուղևորվեց ռազմական գործողությունների շրջանը (Հյուսիսային Մերձսևծովյան շրջան)։

Մի կողմից հայ ազգային-ազատագրական շարժման վերելքի և Կովկասում Ռուսաստանի ռազմաքաղաքական միջոցառումների ակտիվացման և մյուս կողմից՝ Հովսեփ արքեպիսկոպոսի հայրենասիրական լայն գործունեության ու Ռուսաստանի հայ գաղութների քաղաքական դերի բարձրացման շնորհիվ էլ ավելի աճեց Աստրախանի հայկական թեմի քաղաքական նշանակությունը։

1785 թ. Աստրախանում հիմնվեց հայկական կոնսիստորիա։ 1786 թ. օգոստոսի 19-ի սենատական հրամանագրով այդ կոնսիստորիան ենթարկվեց հայ թեմական առաջնորդի ատյանին[38]։

Պավել I-ի՝ 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակով հայկական հոգևոր վարչություններ էին հիմնվում նաև Ռուսաստանի ուրիշ հայկական գաղթավայրերում, ընդ որում, նրանք բոլորը պետք է ենթարկվեին Աստրախանի

---

37 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. I, էջ 174—175։

38 Նույն տեղում, էջ 204—205։

հայկական կոնսիստորիային։ Այսպիսով, եթե Ստեփանոս արքեպիսկոպոսը սկզբնավորեց Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդության համար կոչված անձանց թեկնածության համաձայնեցումը ռուսական կառավարության հետ, ապա Հովսեփ արքեպիսկոպոսի ջանքերով այդ թեմի հայկական եկեղեցական-իրավական օրգանների ամբողջ կառուցվածքը կապվում էր ռուսական օրենսդրության հետ։

Հ. Արզումյանի գործունեության բազմաբնույթ բնույթը պայմանավորված էր պարսկական և թուրքական տիրապետությունից Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման գործում Ռուսաստանի հարաճուն դերով։ Այդ կապակցությամբ XVIII դարի վերջին տասնամյակներին առավել բարձրացավ ռուս-հայ գաղթավայրերի բազմաբնույթ նշանակությունը և ավելի ամրապնդվեց նրանց կապը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հետ։

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ ПОЛИТИЧЕСКИХ СВЯЗЕЙ

В. А. ХАЧАТУРЯН

(Резюме)

В период отсутствия армянской государственности деятельность армяно-григорианской церкви и ее представителей принимала зачастую политический характер. Очень заметной такая роль церкви была и в армянских колониях. Ряд документов, относящихся к истории Астраханской армянской епархии, проливает свет на историю укрепления русской ориентации в высших кругах армянской церкви.

Документы, относящиеся к борьбе эчмиадзинского и гандзасарского католикосов за назначение своих представителей на пост епархиального начальника российских армян, раскрывают политические причины этого соперничества. Хотя руководство Эчмиадзина понимало значение российской епархии как одного из главных оплотов армянского освободительного движения, но по тактическим соображениям оно избегало установления политических контактов с правительством России. В то же время гандзасарские католикосы принимали активное участие в освободительной борьбе армянского народа и имели опыт военно-политического сотрудничества с Россией. Поэтому астраханские армяне делали выбор в пользу кандидатуры, выдвинутой гандзасарским католикосом и поддерживаемой русским правительством.

Со второй половины XVIII в., в результате покровительственной политики России в отношении армянских колоний, повышения их политического авторитета в армянском освободительном движении и установления контактов эчмиадзинских католикосов с правительством России, происходит улучшение отношений Эчмиадзина с астраханской епархией, игравшей важную роль в установлении политических связей руководства армянской церкви с Россией.